9 ապրիլի 2009 թվականի N 619 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1854-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 23-ի «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման ոլորտները և իրականացման կարգը հաստատելու մասին» N 1854-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 2-րդ կետի «գ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծախսային ծրագրով նախատեսված միջոցների 0,75 տոկոսն ուղղել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող ծրագրի ուղեկցման աշխատանքների (էներգետիկ և կապի ծառայություններ, ներքին գործուղումներ, գրասենյակային նյութեր և հագուստ), իսկ 0,75 տոկոսը՝ Հայաստանի Հանրապետության մարզպետարանների կողմից հաստատվող և համայնքների կողմից իրականացվող, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատվող և վարչական շրջանների կողմից իրականացվող ծրագրի ուղեկցման աշխատանքների (էներգետիկ և կապի ծառայություններ, ներքին գործուղումներ, գրասենյակային նյութեր և հագուստ) ֆինանսավորմանը։ Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին (Երևանի քաղաքապետարանին) ծրագրի ուղեկցման աշխատանքների համար հատկացված ֆինանսական միջոցների 50 տոկոսը բաշխել համայնքներին (վարչական շրջաններին)՝ ըստ մարզպետի (Երևանի քաղաքապետի) կողմից հաստատված և իրականացվող ծրագրերի։».

2) որոշման 3-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 25-ը բաշխել Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեի «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրով նախատեսված ֆինանսական միջոցներն ըստ Հայաստանի Հանրապետության մարզերի (Երևան քաղաքի)՝ հաշվի առնելով յուրաքանչյուր մարզում (Երևան քաղաքում) աշխատանք փնտրող անձանց թիվը, գործազուրկների թիվը, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների թիվը, մարզպետարաններից ստացված ծրագրերի հայտ-առաջարկները, ինչպես նաև նախորդ տարվա ընթացքում ծրագրով նախատեսված գումարի օգտագործման չափը՝ համաձայն հետևյալ բանաձևի՝

ա = (հայտ-առաջարկով ներկայացված ծրագրերի իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը՝ մարզի (Երևան քաղաքի) կտրվածքով) / (հայտ-առաջարկով ներկայացված ծրագրերի իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցների ընդհանուր չափը)

բ = (աշխատանք փնտրող անձանց թիվը՝ մարզի (Երևան քաղաքի) կտրվածքով) / (աշխատանք փնտրող անձանց ընդհանուր թիվը)

գ = (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների թիվը՝ մարզի (Երևան քաղաքի) կտրվածքով) / (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների ընդհանուր թիվը)

դ = (նախորդ տարվա ընթացքում օգտագործված գումարի չափը՝ մարզի (Երևան քաղաքի) կտրվածքով) / (նախորդ տարվա համար տվյալ մարզին (Երևան քաղաքին) հատկացված գումարի չափը)

ե = (գործազուրկների թիվը՝ մարզի (Երևան քաղաքի) կտրվածքով) /

գործազուրկների ընդհանուր թիվը

ա-ի կշիռը՝ 0.1

բ-ի կշիռը՝ 0.3

գ-ի կշիռը՝ 0.2

դ-ի կշիռը՝ 0.1

ե-ի կշիռը՝ 0.3

Մթ = 0.1 x ա+ 0.3 x բ + 0.2 x գ + 0.1 x դ + 0.3 x ե,

որտեղ՝

թ-ն Երևան քաղաքի և մարզերի թիվն է։

Մթ-ն յուրաքանչյուր մարզի (Երևան քաղաքի) ամփոփ ցուցանիշն է։

Ցուցանիշները կլորացվում են մինչև տասհազարերորդականը։

$$Գբ = \frac{Մթ}{թ},$$

որտեղ՝

$$\sum_{թ=1} Մթ,$$

Գբ-ն յուրաքանչյուր մարզի (Երևան քաղաքի) բաշխման գործակիցն է՝ արտահայտված տոկոսով։

Եթե նշված բանաձևով բաշխվող գումարի չափը մարզի (Երևան քաղաքի) կտրվածքով գերազանցում է հայտ-առաջարկով նախատեսվածին, ապա հատկացվում է հայտ-առաջարկով նախատեսված գումարը, իսկ գերազանցող մասն ուղղվում է վերաբաշխման՝ այն մարզերի (Երևան քաղաքի) միջև, որոնց հատկացվելիք գումարի չափը պակաս է այդ մարզերի (Երևան քաղաքի) կողմից հայտ-առաջարկով ներկայացված գումարի չափից։ Մարզին հատկացված գումարները չօգտագործվելու դեպքում դրանք վերաբաշխվում են մյուս մարզերի (Երևան քաղաքի) միջև՝ նշված բանաձևով սահմանված կարգով։».

3) որոշման N 1 հավելվածի՝

ա. 1-ին կետից հանել «և նպատակաուղղված է համայնքի սոցիալ-կենցաղային նշանակության աշխատանքների կատարմանը» բառերը,

բ. 3-րդ կետում «(այսուհետ՝ կենտրոն)» բառերը փոխարինել «(այսուհետ՝ տարածքային կենտրոն)» բառերով,

գ. 7.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7.1. Համայնքի ղեկավարը, Երևան քաղաքի վարչական շրջանի ղեկավարը (այսուհետ՝ պատվիրատու) յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացով սահմանված ժամկետներում համապատասխանաբար մարզպետին, Երևանի քաղաքապետին է ներկայացնում հաջորդ տարվա ընթացքում իրականացվելիք ծրագրերի հայտ-առաջարկը, որում նշվում են ծրագրի անվանումը, դրա իրականացման համար անհրաժեշտ մարդ/օրերի թիվը, նախատեսվող ֆինանսական ներդրումների չափը, ծրագրով ակնկալվող ֆինանսական միջոցների չափը և տևողությունը: Ծրագրերի հայտ-առաջարկով նախատեսված գումարը չպետք է գերազանցի հաջորդ տարվա համայնքի պլանավորած բյուջեի 20 տոկոսը:

Այն համայնքները, որոնք չեն հավաքագրել գույքահարկը և հողի հարկը՝ մինչև 50 տոկոս, և ունեն մինչև 5.0 մլն դրամ աշխատավարձի պարտք, հաջորդ տարվա համար չեն ներկայացնում ծրագրերի հայտ-առաջարկ:

Մարզպետարանը (Երևանի քաղաքապետարանը) ամփոփում է համայնքներից, Երևան քաղաքի վարչական շրջաններից ստացված հայտ-առաջարկները և արդյունքները յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացով սահմանված ժամկետներում ներկայացնում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն):»,

դ. 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Ծրագիրն իրականացվում է պատվիրատուի կողմից նախորդ տարվա ընթացքում մարզպետարան, Երևանի քաղաքապետարան ներկայացված ծրագրերի հայտ-առաջարկին համապատասխան, որում նշվում են կատարման ենթակա աշխատանքների ցանկը, մարդ/օրերի թիվը, նախատեսվող ֆինանսական ներդրումների չափը, ծրագրով ակնկալվող ֆինանսական միջոցների չափը և իրականացման ժամանակացույցը:

Մարզպետը և Երևանի քաղաքապետը տվյալ տարվա համար մարզին և Երևանի քաղաքապետարանին հատկացված ֆինանսական միջոցները ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ը բաշխում են համապատասխանաբար համայնքների և Երևան քաղաքի վարչական շրջանների միջև՝ այլ հավասար պայմաններում առաջնահերթությունը տալով այն համայնքներին, Երևան քաղաքի վարչական շրջաններին, որոնք նախորդ երկու տարում ծրագրեր չեն իրականացրել: Մարզպետը և Երևանի քաղաքապետը ֆինանսական միջոցները բաշխում են համաձայն հետևյալ բանաձևի.

հայտ-առաջարկով ներկայացված ծրագրերի իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը՝ համայնքի (վարչական շրջանի) կտրվածքով
ա1 = ----------
հայտ-առաջարկով ներկայացված ծրագրերի իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցների ընդհանուր չափը՝ մարզի (Երևան քաղաքի) կտրվածքով

աշխատանք փնտրող անձանց թիվը՝ համայնքի (վարչական շրջանի) կտրվածքով
բ1 = ----------
աշխատանք փնտրող անձանց թիվը՝ մարզի (Երևան քաղաքի) կտրվածքով

ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների թիվը՝ համայնքի (վարչական շրջանի) կտրվածքով
գ1 = ----------
ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների ընդհանուր թիվը՝ մարզի (Երևան քաղաքի) կտրվածքով

գործազուրկների թիվը՝ համայնքի (վարչական շրջանի) կտրվածքով
դ1 = ----------
գործազուրկների թիվը՝ մարզի (Երևան քաղաքի) կտրվածքով

ա1-ի կշիռը՝ 0.3

բ1-ի կշիռը՝ 0.3

գ1-ի կշիռը՝ 0.1

դ1-ի կշիռը՝ 0.3

Հթ= 0.3 x ա1+ 0.3 x բ1 + 0.1 x գ1 + 0.3 x դ1

որտեղ՝

թ-ն համայնքների, վարչական շրջանների թիվն է,

Հթ-ն յուրաքանչյուր համայնքի, վարչական շրջանի ամփոփ ցուցանիշն է։

Ցուցանիշները կլորացվում են մինչև տասհազարերորդականը։

$$Գբ = \frac{Հթ}{թ},$$

որտեղ՝

$$\sum_{թ=1} Հթ$$

Գբ -ն յուրաքանչյուր համայնքի, վարչական շրջանի բաշխման գործակիցն է։

Եթե նշված բանաձևով բաշխվող գումարի չափը համայնքի, վարչական շրջանի կտրվածքով գերազանցում է հայտ-առաջարկով նախատեսվածին, ապա հատկացվում է հայտ-առաջարկով նախատեսված գումարը, իսկ գերազանցող մասն ուղղվում է վերաբաշխման՝ այն համայնքների, վարչական շրջանների միջև, որոնց հատկացվելիք գումարի չափը պակաս է այդ համայնքների, վարչական շրջանների կողմից հայտ-առաջարկով ներկայացված գումարի չափից։ Համայնքին, վարչական շրջանին հատկացված գումարները չօգտագործվելու դեպքում դրանք վերաբաշխվում են մյուս համայնքների, վարչական շրջանների միջև՝ նշված բանաձևով սահմանված կարգով։

Ֆինանսական միջոցների բաշխումը, ծրագրերի ուղղվածությունը և դրանք ներկայացնելու ժամանակացույցն ըստ համայնքների, Երևան քաղաքի վարչական շրջանների հաստատվում են համապատասխանաբար մարզպետի և Երևանի քաղաքապետի որոշմամբ՝ ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ը, և այդ տեղեկատվությունը տրամադրվում է տեղական ինքնակառավարման մարմիններին ու տարածքային կենտրոններին։

Հաստատված ժամանակացույցից և ծրագրերի ուղղվածությունից դուրս այլ ծրագրեր քննարկման ենթակա չեն՝ բացառությամբ սույն կարգի 2-րդ կետի «բ» ենթակետով սահմանված դեպքերի, կամ, եթե առկա են չծախսված ֆինանսական միջոցներ։»,

ե. 12-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Հանձնաժողովի կողմից դրական եզրակացության արժանացած ծրագիրը եռօրյա ժամկետում համաձայնեցման է ներկայացվում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն։»,

զ. 13-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության հետ համաձայնեցված ծրագիրը հաստատվում է մարզպետի, Երևանի քաղաքապետի որոշմամբ՝ հնգօրյա ժամկետում։»,

է. 16-րդ և 29-րդ կետերից հանել «և էկոնոմիկայի» բառերը,

ը. 21-րդ կետում «որը մինչև հաջորդ ամսվա 5-ը նախորդ ամսվա» բառերը փոխարինել «որն էլ ստանալուց հետո եռօրյա ժամկետում» բառերով,

թ. 28-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«28. Մարզպետը, Երևանի քաղաքապետը պատվիրատուներից ստացված, ամփոփված և ըստ համայնքների, վարչական շրջանների կազմված ֆինանսավորման մասին հայտը մինչև տվյալ ամսվա 15-ը ներկայացնում է նախարարություն։»,

ժ. 33-րդ կետի երրորդ պարբերությունը «համայնքներից» բառից հետո լրացնել «, Երևան քաղաքի վարչական շրջաններից» բառերով,

ժա. 35-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«35. Ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների նկատմամբ մոնիթորինգ և վերահսկողություն են իրականացնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ լիազորված մարմինները։

Մոնիթորինգի աշխատանքներում, փոխադարձ համաձայնությամբ, կարող են ներգրավվել նաև համապատասխան հասարակական կազմակերպություններ։»,

ժբ. 38-րդ կետը «Մարզպետի» բառից հետո լրացնել «, Երևանի քաղաքապետի» բառերով,

ժգ. NN 1 և 2 ձևերի վերնագրերը «մարզի» բառից հետո լրացնել «(Երևան քաղաքի)», իսկ «համայնքի» բառից հետո՝ «(Երևան քաղաքի վարչական շրջանի)» բառերով,

ժդ. N 3 ձևը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

4) որոշման N 2 հավելվածի՝

ա. 1-ին կետը «համայնքի» բառից հետո լրացնել «(Երևան քաղաքի վարչական շրջանի)» բառերով,

բ. 2.1.2-րդ կետից հանել «և էկոնոմիկայի» բառերը,

գ. 2.1.2-րդ կետի «գ» ենթակետը «համայնքի» բառից հետո լրացնել «(Երևան քաղաքի վարչական շրջանի)» բառերով,

դ. 2.2.1-ին կետը «համայնքի» բառից հետո լրացնել «(վարչական շրջանի)» բառերով, իսկ «(ԹԱՂԱՅԻՆ)» բառը փոխարինել «(ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ)» բառերով։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ Երևան քաղաքում՝ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2009 թ. հունիսի
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
ապրիլի 9-ի N 619 - Ն որոշման

«Ձև N 3

Ց ՈՒ Ց Ա Կ

20 թ. _____ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՎՃԱՐՄԱՆ
(ամիսը)

NN ը/կ	Բնակու-թյան վայրը	Անունը, ազգանունը, հայրանունը	Անձնագրի սերիան, համարը	Սոցիալա-կան քարտի համարը	Հաշվետու ամսում և նախորդ ամիսներին վճարման ենթակա, սակայն չվճարված գումարը							
					աշխա-տանքի հաճա-խած օրերի թիվը	աշխա-տավար-ձի չափը (դրամ)	ընդամենը՝ գումարը (դրամ)	այդ թվում՝		վճար-ման օրը, ամիսը, տարե-թիվը	անձի ստորա-գրու-թյունը	վճարողի ստորա-գրությունը
								հաշվե-տու ամսում	նախորդ ամիսնե-րի պարտքը			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13

Պատվիրատու _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ.»:

09_0619

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ